

«ԼՈՐԿԵ»-Ն՝ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՐՄԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ՇՈՒՐՋՊԱՐ

ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Հայկական ժողովրդական երգաստեղծության մեջ, ինչպես նաև պարարվեստում, քիչ չեն «թռչնային» վերնագրերով երգեր և պարերգեր, որոնք սերտորեն կապված են հայոց հնագույն հավատքի, ավանդությունների, հավատալիքների հետ և գալիս են դեռևս կենդանապաշտության ու բնապաշտության ժամանակներից: Այդպես, Ալաշկերտում տարածված էր սագի պարը՝ «Ղազ-ղազ», Շատախում՝ կոունկի պարը՝ «Կոնգավէն», Կարինում (Էրզրում)՝ հավի պարը՝ «Թավոխպար»¹, Վանում՝ հավքի պարը՝ «Խավկու», Ապարանում՝ կաքավի պարը՝ «Կաքավն էկավ»², նույն կաքավի պարը՝ Վասպուրականում՝ «Կաքվներ»³, Թալինում՝ «Լաչին»-ը⁴ ևն: Պարագետները համարում են, որ հայերն անցյալում ունեցել են նաև «արծվային» պարեր, քանի որ արծիվը, հազարամյակներ շարունակ, որպես հնագույն տոտեմ-թռչուն, արտացոլվել է մանրանկարչության մեջ և զարդարվեստում, պատկերվել է զինանշանների և նշանադրոշների վրա:

Հայկական հարսանեկան երգերում տոտեմ-կենդանիների և թռչունների դերի և նշանակության մասին հոդվածում⁵ մենք առիթ ունեցել ենք անդրադառնալու **հավ-ի** խորհրդաբանությանը՝ մատնանշելով բառարմատի «բնիկ հայ լինելը» և մի քանի իմաստ ունենալը՝ «պապ, հոր հայր, մեծ հայր, մեծ մայր, նախնիք», ինչպես և «ծայր, սկիզբ, սկզբնատրուփին»⁶, որից և առաջա-

¹ **Лисициан С.**, Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 1, Ереван, изд. «Академия», 1958, с. 245.

² Նույն տեղում, էջ 331, 566:

³ **Թումանյան Մ.**, Հայրենի երգ ու բան, 4 հ., Երևան, «Զանգակ» հրատ., 2005, N 288-289, էջ 336-338:

⁴ **Лисициан С.**, Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 2, Ереван, изд. «Академия», 1972, с. 348.

⁵ **Տիգրանյան Մ.**, Թռչունների և կենդանիների տոտեմի դրսևորումները հայկական հարսանեկան ծիսական երգերում // Երիտասարդ հայ արվեստաբանների գիտ. III նստաշրջան, Երևան, 16-17/12/2008, էջ 160:

⁶ **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, 3 հ., Երևան, «Համալսարան» հրատ., 1977, էջ 65-67:

ցել են «հավատք», «հավերժ», «հավիտյան» բառերը⁷:

Այս առումով ոչ պակաս հետաքրքրական է **լորիկ** թռչունի դիտարկումը, որն ունի առանձնահատուկ դեր ու նշանակություն հայոց հարսանեկան ծեսում: Այս պարերգի խիստ տիպական մեղեդային դարձվածքը ենթադրել է տալիս, որ այն ի սկզբանե եղել է ծիսական, առավել ևս, որ այդ մասին կան վկայություններ: «Լորկե» պարերգն անցյալում պարել են միայն հարսանիքին՝ «հարսին հոր տնից հանելիս» և Վարդավառին⁸: Ամենայն հավանականությամբ, «Լորկե»-ն ունեցել է հատուկ տեքստ, ինչպես «Թագվորամեր, դո՛ւս արի», «Էն դիզան, պետ-պետ դիզան» կամ «Ջնկլո»՝ զուտ ծիսական հարսանեկան պարերգերը: Սիրային բնույթի թափառիկ խաղիկներով այն «համեմվել է» ավելի ուշ շրջանում՝ հետզհետե կորցնելով իր ծիսական պատկանելությունը: Կայուն պահպանվել է միայն հիմնատող-կրկնակը.

Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե, –
Խանըմե Լորկե:

կամ

Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե, –
Ջանըմե Լորկե:

Այն, որ **Լորկե**-ն հաճախ նշվել է մեծատառով, կարծում ենք, պետք է ընկալել ոչ որպես իգական անձնանուն⁹, այլ որպես նախնիներին դիմելու հարգալից ձև¹⁰: Այս առիթով Սրբուհի Լիսիցյանը գրում է. «Դա մատնանշում է այն, որ **լորին** նվիրված հնագույն տեքստերում **նրան** դիմել են որպես նախնիների հոգու՝ տիրոջ, տիրակալի, տիրուհու: Հիմնատող-կրկնակները՝ որպես ժողովրդական երգերի խտացված միտք պարունակող մաս, անցյալում

⁷ Ավելորդ չէ հիշատակել հայ հոգևոր երգարվեստի մեծագույն կոթողները՝ Գր. Նարեկացու «Հաիկ» և «Հաուն-հաուն» խոհաքնարական տաղերը:

⁸ Վարդավառին՝ ծաղիկները փնջելիս, պարել են միայն երիտասարդ աղջիկները, ոչ տղաները: **Лисициан С.**, նշվ. աշխ., հ. 2, էջ 340:

⁹ Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարան»-ում նշում է. «Լորիկ, իգ. <իյ. լոր թռչունի անունից, ինչպես ունիք Աղանի, Արծուիկ, Սիրամարգ: Գործածված է ԺԳ դարում: Կենդանի է նաև այժմ» (**Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Բ հ., Երևան, «Պետհամալսարան» հրատ., 1944, էջ 437): Եր. Լալայանի «Վասպուրականի ազգագրություն» բաժնում զետեղված անձնանունների բառարանում **Լորիկ** անունը հիշատակված չէ (**Լալայան Եր.**, «Ազգագրական հանդես», 20 գ., Թիֆլիս, 1910):

¹⁰ Ներկա աշխատանքում «Լորկե»-ն մեծատառով գրելու սկզբունքը չենք պահպանել, քանզի օգտվել ենք հրատարակված աղբյուրներից. որտեղ «լորկե»-ն փոքրատառ է:

ունեցել են մոգական և հմայախոսական նշանակություն, իսկ ավելի ուշ՝ իմաստավորվել որպես աղոթք»¹¹:

Ինչու՞ է հայկական հարսանեկան ծեսում այդքան կարևորվել **այդ** թոչունը: Արդյո՞ք **լորը**, ինչպես և **հավը**, ունեցել է **առանձնահատուկ** նշանակություն, և եթե այո՝ ապա ո՞րն է նրա իմաստային «ծածկագիրը»:

Լորի¹² (Coturnix) մասին հիշատակումներ կան դեռևս Հին Կտակարանում, երբ իսրայելցիները, Կարմիր ծովն անցնելով, իջևանեցին Սին, այնուհետև Կիբրոթ-Հաթթավա անապատներում, տանջանքների, սովի և զրկանքների մատնված՝ բողոքեցին Աստծո դեմ (Թուոց. XI, 31-34): Ահարոնը, ժողովելով իսրայելցիներին, նայեց դեպի անապատ, և ահա Աստծո փառքը ամպի մեջ երևաց, և նա Մովսեսին ասաց. «Իսրայելի որդիների տրտունջը լսեցի. խօսիք նորանց հետ ասելով. Իրիկուայ դեմ միս պիտի ուտեք, եւ առաւօտանց հացով պիտի կշտանաք: Եւ եղաւ իրիկունը, որ լորամարգիներ ելան եւ բանակը ծածկեցին...» (Ելից. XVI, 10-14)¹³: Երբ հազարավոր լորամարգեր երկնքից թափվեցին, և ժողովուրդը կշտացավ, հաջորդ առավոտյան Աստված ուղարկեց երկնային քաղցրահամ հաց՝ մանանա¹⁴, որը, բացի շաբաթ օրերից, 40 տարի շարունակ՝ ամեն առավոտ, ցողի պես պատում էր երկիրը:

¹¹ Лисициан С., նշվ. աշխ., հ. 2, էջ 341:

¹² Լորը հավազգիների կարգի փասիանների ընտանիքի ամենափոքր թոչունն է: Մարմնի երկարությունը՝ 16-20 սմ, քաշը՝ 80-145 գ: Ապրում է դաշտերում, հարթավայրերում և լեռներում: Չվող թոչուն է, տարածված է Հայաստանում Bjhiփy:

Լորերը երգեցիկ թոչունների խմբում չեն դասվում, այնուամենայնիվ, նրանք ծայնեղ են (հատկապես արունները), և բարենպաստ եղանակային պայմաններում նրանց ծայնը տարածվում է շուրջ 2-3 կմ: Եվս մի հետաքրքիր փաստ այդ թոչունի վերաբերյալ. լորը առաջին կենդանի էակն է, որը ծնվել է տիեզերքում՝ հատուկ տիեզերական թիսամեքենայում, 1990 թ., մարտի 22-ին «ԾՌՌ» ուղեծրային կայանում:

¹³ Նույն հատվածը Ղուրանում, Սուրահ 2, 57:

¹⁴ Մանանան (եբրայերեն՝ man hu - «այս ի՞նչ է», ասորերեն՝ manna, հունար.՝ manna) շաքարաման նյութ է, որն արտադրում են մի քանի տեսակ բույսեր, բնական կամ արհեստական եղանակով, ինչպես և միջատներից խայթվելու հետևանքով: Մանանայի առաջացման վերաբերյալ գիտնականների կարծիքները տարբեր են. մի մասը գտնում է, որ այն առաջանում է Հայաստանի տարածքում (Մուշ) աճող Quercus Vallonea և Quercus Persica կաղնիների տերևների կամ Lecanora esculenta քուի (քարաքոս, лишайник) արտադրված փոշուց: Գիտնականների մյուս մասը համարում է, որ մանանան առաջանում է աերոֆիտ (аэрофит «aer»՝ օդ և «phyton»՝ բույս) կոչված բույսերից (Aspicilia - «лишайниковая манна»), որոնք կենսագործունեությունն ապահովող անհրաժեշտ օգտակար նյութերը, ինչպես և խոնավությունը, ստանում են օդից: Աերոֆիտների բոլոր օրգանները գտնվում են օդային միջավայրում և, ոչնչով ամրացված չլինելով, այդ ուսելի շերտերն

Հր. Աճառյանը «**լոր**» բառարմատի ծագումը «բնիկ հայերեն» է համարում, և «լորամարգ» ձևը նույն նշանակությունն է կրում¹⁵: Հունաստանում **լորը** մայրության և մայրական սիրո խորհրդանիշ է համարվում, որովհետև սերտորեն կապված է Ջևաի սիրուհի¹⁶ Լետոյի անվան հետ: Հերան հալածում էր այդ տիտանուհուն (հռոմ.՝ Լատոնա, սլավոն.՝ Լադա)՝ արգելելով Երկիր-հողին ընդունել հղի Լետոյին¹⁷: Ջևաը վերջինիս դարձնում է լոր, որը, ապաստան գտնելով Դելուս կղզում, ծննդաբերում է իր երկվորյակներին՝ Արտեմիսին և Ապոլլոնին¹⁸: Այլ աղբյուրների համաձայն՝ Ջևան ինքն է դարձել լոր և տիրացել Լետոյին¹⁹: Դելուս կղզին անվանում են «Լորերի կղզի», իսկ Արտեմիս աստվածուհուն, ինչպես և նրա մայր Լետոյին՝ լորերի հովանավոր:

Չինական խորհրդաբանության մեջ լորն իմաստավորում է ռազմական քաջություն և արիություն: Միջին Ասիայում՝ Ուզբեկստանում, Թուրքմենստանում, Ղրղզստանում, տարածված էր «Լորերի թռչնակոիվ» կոչվող մարգածևը, այդ իսկ պատճառով բազմացնում էին լորեր և պահում հատուկ վանդակներում՝ լորանոցներում: Բուխարայում լորը համարվել է ազգային թռչուն և անվանվել է **բեդանա**²⁰: Ինչպես իրավացիորեն նշում է Ջեկ Թրե-սիդդերը. «լորը Արևելքի մշակութային ծածկագիրն է»²¹:

Հին աշխարհի գրավոր արձանագրություններում **լոր**-ն ունեցել է առանձնահատուկ նշանակություն: Հին եգիպտական գրերի միաբաղաձայն համակարգում **լոր** հիերոգլիֆն արտաբերում էր –v– և –w– հնչյունները: Մ.թ.ա

ազատ կարող են տեղափոխվել տասնյակ կիլոմետրեր: Գոյություն ունի ևս մի գիտական տեսակետ, որ մանանան Տամարիքս բույսից արտադրվող հյութն է, որը թանձրանում է Սինա թերակղզում բնակվող որոշակի տեսակի բուսաճճվի վերամշակումից: Տեղացի բեդվիներն առ այսօր հավաքում են այդ մանանան՝ անվանելով այն «Mann-es-Sama»:

¹⁵ **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, 2 հ., Երևան, «Համալսարան» իրատ., 1973, էջ 297-298:

¹⁶ Այլ աղբյուրների համաձայն՝ մինչև Հերային հանդիպելը Ջևան արդեն ամուսնացած է եղել Լետոյի հետ:

¹⁷ Мифы народов мира, 2 т., Москва, изд. «Советская энциклопедия», 1988, с. 51-52.

¹⁸ **Сервий**, Комментарий к «Энеиде» Вергилия, III, 73 (**Лосев А.Ф.**, Мифология греков и римлян, Москва, изд. «Мысль», 1996, с. 663).

¹⁹ Схолин к Пиндару. Пифийские песни. Введение (**Лосев А.Ф.**, Мифология греков и римлян, Москва, изд. «Мысль», 1996, с. 412).

²⁰ Որոշ «Լորկե»-ների կրկնակում «խանըմե»-ի կամ «ջանըմե»-ի փոխարեն երգվում է «բեդավո» կամ «բեդավե» (bedava թուրքերենից թարգմանվում է՝ անվճար, անհատույց, նաև՝ քոչվոր, թափառիկ կյանք):

²¹ **Трессидер Дж.**, Словарь символов. Москва, изд. «Файр-Пресс», 1999.

4-3 հազ. շումերական արձանագրություններում **լոր** նշանակությամբ սեպագիրը կարդացվում էր *šen – šen – bal*²² շեն-շեն-բալ,



որտեղ *šen*-ը իմաստավորում էր՝ ճիշտ, առաջ, շիտակ, աջ, իսկ *bal*-ը՝ թարս, հետ, ձախ: Այսպիսով, հին շումերները, «լոր»-ն անվանելով *šen – šen – bal*, նկատի են ունեցել «շիտակ-շիտակ-թարս» կամ «աջ, աջ, ձախ» շարժումը: Աքքադերենում **urballu** բառն ունեցել է երկու իմաստ՝ «**լոր**» և «**քայլ**»: Այսպիսով, շումերների և ակքադացիների մոտ «լոր»-ն իմաստավորվել է «երկու շիտակ, մեկ թարս» շարժումով, ճիշտ այնպես, ինչպես հայերը դարեր շարունակ պարել են «Լորկե»-ն՝ «երկու աջ, մեկ ձախ» կամ «երկու առաջ, մեկ հետ» քայլերով: Աճառյանը, «քայլ» արմատը ստուգաբանելով, մի շարք զուգահեռներ է անցկացնում (սանսկր. *kal* «երթալ», լատ. *celer* «վազք», պարսկ. *kām* «քայլ» ևն)²²: Արդյոք կարելի՞ է ենթադրել, որ արդի անգլերենում «quail» (լոր) բառն աղերսվում է հայերեն «քայլ»-ի հետ²³:

Այն, որ **լոր**-ը հատուկ դրսևորում է ունեցել հատկապես հարսանեկան ծեսում, վկայություն է այն իրողության, որ մեր նախնիները շատ կարևորել են այդ թռչնի դերը, և ինչպես **հավ**-ը, **լոր**-ը նույնպես հանդիսացել է տոտեմ-թռչուն: «Լորկե»-ն՝ որպես պարերգ, տարածված և սիրված է եղել հատկապես Ալաշկերտում և Վասպուրականում, մասնավորապես Վանում: Այդ են վկայում ինչպես Ս. Լիսիցյանի ազգային պարերի գիտակ ինֆորմանտներից ստացած տեղեկությունները, այնպես էլ մեր կատարած ուսումնասիրություններն ու հավաքած երաժշտական նյութը²⁴: Ցանկացած պարերգ, հատկապես ծիսա-

²² **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, 4 հ., Երևան, «Համալսարան» հրատ., 1979, էջ 549:

²³ **Ասմանգույան Հ.Ա., Հովհաննիսյան Մ.Ի.**, Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 2004, էջ 750:

²⁴ Տվյալ աշխատանքում նպատակային ենք համարում ուսումնասիրել «Լորկե»-ների տեքստերը, այդ իսկ պատճառով շրջանցել ենք այդ պարերգի զուտ գործիքային տարբերակները, քանզի մեղեդային առումով դրանք գրեթե նույն երգային «Լորկե»-ներն են: **Մելիքյան Ս.**, Հայ ժողովրդական երգեր և պարեր, 1 հ., Երևան, 1949, N 182, էջ 145:

կան, ունեցել է վաղուց ի վեր ձևավորված հստակ կառուցվածք՝ տիպական մեղեդի և ստույգ մետրառիթմիկ պատկեր, որոնք կազմավորվել և հղկվել են դարերի ընթացքում: Ծեսի ներսում գոյացած ցանկացած «մեղեդի» կարծրատիպ դարձվածք է: Ժողովրդական երգաստեղծության այլ ժանրերի համեմատ ծիսական երաժշտությունն առավել դժվար է ենթարկվում արտաքին ազդեցությունների: Նման «արտաքին ազդեցության» դրսևորումներից է լեզուն (քրդերենը, թուրքերենը), որը, ի տարբերություն երաժշտական մտածողության, ավելի դյուրին է փոփոխության ենթարկվել: Եթե հայը, նվաճողների ճնշման հետևանքով ստիպված է եղել երգել քրդերեն կամ թուրքերեն, ապա նա փոխառել է միայն լեզուն, բայց ոչ երաժշտական մտածողությունը: Ս. Լիսիցյանի ինֆորմանտներից ձայնագրված «Լորկե»-ների տեքստերը քրդերեն են: Այս հանգամանքն առիթ է տվել քուրդ երաժշտագետներին և լեզվաբաններին «Լորկե»-ն համարել իրենց ազգային պարերից մեկը: Նրանք, հաշվի չառնելով պատմական իրողությունները, անհաջող փորձեր են կատարել «Լորկե»-ին վերագրել քրդական ծագում: Տպավորությունն այնպիսին է, որ ցանկացած քրդերեն երգած երգ ինքնաբերաբար «դառնում է» **քրդական**: Անտեսելով այն հանգամանքը, որ տվյալ ինֆորմանտներն ազգությամբ հայ են, հայկական ազգային մշակույթի՝ երգ ու պարի կրողներ, քուրդ գիտնականների միակ հիմնարար և բավարար փաստարկը քրդերենով երգված տեքստն է:

Այսպես, Կոմիտասի, Մ. Թումաճանի, Ս. Մելիքյանի ձայնագրություններում քիչ չեն քրդերեն և թուրքերեն երգած երգեր և պարերգեր, և դա բնական է այդ ժողովուրդների՝ տասնյակ տարիներ կողք կողքի ապրելու պայմաններում: Հայ և քուրդ բնակչության սերտ շփումները սկսվեցին XVIII դարից, երբ Վասպուրական և Տարոն աշխարհներն անցան քուրդ դարաբեյական իշխանապետությունների հսկողության տակ: Ելնելով այն հանգամանքից, որ հարևանությամբ շատ քրդեր և թուրքեր էին ապրում, հայերը լավ տիրապետում էին և՛ քրդերենին, և՛ թուրքերենին: Այս առիթով Հայրիկ Մուրադյանը նշում է. «Հայ որոշ գուսաններ հորինում էին թե՛ հայերեն, թե՛ քրդերեն երգեր: Քրդերեն էին ստեղծագործում հատկապես Վասպուրականի, Տարոնի, հարավային շրջանների ու Տիգրանակերտի քրդախոս հայերը, բայց նաև Սղերդի, Սասնա, Խոշաբի, Աղբակի, Մոկսի, Տարոնի ոչ քրդախոս հայերը: Մոկացի

գուսան Գարեգինը (ապրել է XIX դ. սկզբներում) բազմաթիվ քրդերեն երգեր է հորինել, ...[նրա] երգերը մտել են քրդական ժողովրդական երգերի գանձարանը, քանի որ դրանք քրդերեն են եղել»²⁵:

Սակայն չմոռանանք, որ խոսքը **քրդերի**՝ մահմեդականության ընդունած եզդիների մասին է, իսկ մուսուլմանական աշխարհի վերաբերմունքը պարի նկատմամբ խիստ հակասական էր²⁶:

Մենք բոլորովին չենք ժխտում այն իրողությունը, որ «Լորկե»-ն տա-րածված և սիրված է եղել որքան հայկական, այնքան էլ քրդական միջա-վայրում: Սակայն խոսքն այնպիսի պատմական տարածքների մասին է, ինչ-պիսիք են Վանն²⁷ ու Ալաշկերտը²⁸ ազգային խոր ավանդույթներ ունեցող

²⁵ «Հայրենի երգեր», Երևան, «Նոր գիրք» հրատ., 2007, էջ 25-26:

²⁶ Պարզ. որպես այդպիսին, իսլամի կրոնաբանության վիճելի հարցերից է, քանզի այն չի խրախուսվում և Ալլահի համար ոչ հաճելի զբաղմունք է համարվում (պորտապարի բացառությամբ, որը կինն իրավունք ունի պարելու միայն իր ամուսնու համար՝ ընտա-նիքը և ամուսնական կապերն ամրապնդելու նպատակով): Արմատական իսլամի հետ-նորդներ սալաֆիտներն ու վախխաբիթները երգն ու պարն առհասարակ արգելում են՝ համարելով այն «hārām»՝ մեղք, որը կարող է օտար կնոջ և տղամարդու միջև անցան-կալի կիրք առաջացնել: Չափավոր իսլամիստների կողմից պարն ընկալվում է որպես «hālāl»: Հետաքրքիր են այս առումով միսոիկ-սուֆիստները՝ իսլամի կրոնափոխության-յական ուսմունքի ասկետիկ հետնորդները, որոնք մուսուլմանական աշխարհի «ամենա-հաստատուն» պարողներն են. որոշակի պարային պտույտներ կատարելով՝ մտնում են տրանսի մեջ՝ Ալլահին է՛լ ավելի մոտ լինելու համար: Ինչևիցե, եթե անցյալ դարի 60-ա-կաններին գյուղական միջավայրում դեռևս կարելի էր հանդիպել տղամարդկանց խմբա-կային պարերի եզակի կատարումների (Աֆղանստանի փուշտունների «Աթթուն» շուրջ-պարը, Եմենում փայտերով ռազմական պար՝ «Շաբվանի»-ն, Էմիրաթներում՝ «Ռազֆա» շուրջապարը, երբ տղամարդիկ միմյանց ամուր բռնում են գոտկատեղից), ապա մեր օրերում այն գրեթե վերացել է (Иордан М., Кузеев Р., Червонная С., Ислам в Евразии, Москва, изд. «Прогресс-Традиция», 2001, с. 412-515; Смирнов А., Великий шейх су-физма, Москва, изд. «Наyka», 1993, с. 328).

²⁷ Վասպուրականի տարածքը հնագույն ժամանակներում ամբողջությամբ մտել է հին Հայաստանի՝ Ուրարտուի մեջ: Վանը (Քիայնա, Շամիրամի քաղաք, Տոսպ, Տուշպանի ևն) հիմնադրել է Ուրարտուի Սարգուր X թագավորը (մ.թ.ա 835 թ.)՝ անվանելով Տուշպա: Գտնվելով հայկական պետության երկրաչափական կենտրոնում՝ Վանը ճանապարհ-ներով կապված է եղել երկրի բոլոր կարևոր շրջանների հետ («Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», 4 հ., Երևան, «Երևանի համալսարանի հրատա-րակչություն», 1998, էջ 747-752):

²⁸ Ալաշկերտը հիշատակված է դեռևս մ.թ.ա 16-15 դդ. խեթական արձանագրություն-ներում: Մինչև XVII դ. գործածական է եղել Վաղարշակերտ անունը՝ ի պատիվ քաղաքի հիմնադիր Հայոց Արշակունյաց թագավոր Վաղարշակի (մ.թ.ա II դ.): Ալաշկերտի

օջախների, որոնք դարեր շարունակ բնակեցված են եղել հայերով: Ավելին, վանեցիները պատմում էին, որ թուրք և քուրդ մուսուլման տղամարդիկ իրենց միջավայրում խմբակային պարեր առհասարակ չէին պարում, ինչպես նաև չէին պարում ասորիներն ու եզդիները²⁹: Սակայն, հայերի մեջ ապրելով, յուրացնելով նրանց մշակույթն ու բարքերը, քրդերն ու թուրքերը տոնախմբությունների և զվարճանքների ժամանակ միանում էին հայերին և մասնակցում խմբակային պարերին:

Հնարավոր ամբողջությամբ հավաքելով և ուսումնասիրելով «Լորկե»-ների ինչպես հրատարակված, այնպես էլ անտիպ օրինակները՝ փորձենք պարզաբանել, վերլուծել և հասկանալ, թե ինչ կարևոր դեր ու նշանակություն է ունեցել այդ պարը հայոց ավանդական հարսանեկան ծիսակարգում: Մեր ձեռքի տակ եղած ամենավաղ գրառումներից է Տիգրան Չիթունուց³⁰ ծայնագրված կոմիտասյան «Լորկե»-ն: Էջմիածնում 1908 թ. սեպտեմբերին, երբ պիտի տեղի ունենար Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցու³¹ օծման արարողությունը, Կոմիտասը հանդիպում է Չիթունուն և

տարածքում է հայտնաբերվել մ.թ.ա. VIII դ. ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշատակված Ալաշա քաղաքը, որից էլ ծնվել է Ալաշկերտ անվանումը: XVIII-XIX դարերից Ալաշկերտում աստիճանաբար սկսել են բնակվել քրդերն ու թուրքերը («Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», 1 հ., Երևան, «Համալսարան» հրատ., 1986, էջ 63-64):

²⁹ Êzdi ինքնանվանումը սերվում է Յազդինա առաջնորդի անունից (յԱzdina՝ «Ես եմ հավատքը»): Համառորեն մերժելով իսլամը (VII դ.)՝ եզդիները շարունակել են մնալ արևապաշտ: Յազդիզմը վերջնականորեն ձևավորվել է XIV-XV դդ. (կրոնական ուսմունքի հիմնադիրն է՝ շեյխ Ադի Իբն Մուսաֆիրը [1072-1162 թթ.]), որն ընդգրկել է գրադաշտության, հուդայիզմի, քրիստոնեության և մանիքեության տարրեր: Դարեր շարունակ եզդիները, ինչպես և հարևան քրիստոնյա ազգերը, հալածվել են մուսուլմանների կողմից, և սարսափելին այն էր, որ Օսմանյան Թուրքիայի կառավարության կողմից կազակերսկից XIX դարի վերջին և XX դարի սկզբին այլադավան ազգերի ջարդերին օսմանների հետ հավասար եզդիների զանգվածային բնաջնջմանը մասնակցել են իրենց արյունակից եղբայրները՝ քրդերը:

³⁰ Տ. Չիթունի (Չիթյան, 22.4.1881, Վան), բանահավաք-ազգագրագետ, կրթություն է ստացել Երամյան բարձրագույն վարժարանում, 1910-ից հաստատվել է Կ. Պոլսում և հիմնել «Հայագիտում» հրատարակչությունը: 1919-ին հաստատվել է Փարիզում, որտեղ էլ 1960 թ. կնքել է իր մահկանացուն:

³¹ Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցին (ավագանի անունը՝ Սիմեոն Մարտիրոսի Իզմիրյան, 22.2.1845, Կ. Պոլիս – 11.12.1910, Էջմիածին) հաջորդել է Մկրտիչ Ա Վանեցուն՝ Խրիմյան Հայրիկին: 1864-ին ձեռնադրվել է սարկավագ, 1873-ին ստացել է ծայրագույն վարդապետի աստիճան, իսկ երեք տարի անց՝ ձեռնադրվել եպիսկոպոս: Պայքարելով

երկու երեկոյի ընթացքում գրի է առնում շուրջ «մեկ հիսնյակ» երգ, որոնք, ըստ Չիթունու, ընտրված են եղել «Սպարկերտի, Կարկառի, շրջակա գավառներու և Վանա կոյս միջավայրեն ու գրեթե բնավ չլսված երգեր են»³²:

Տարիներ անց Փարիզում (1922-23 թթ.) Չիթունին այդ նույն երգերը երգել է Միհրան Թումանյանին³³: Վերջինս, ջանասիրաբար հավաքելով ու դասակարգելով այդ ձայնագրությունները, միտք էր փայփայել նման արժեքավոր և ծավալուն հավաքածուն առանձին գրքով հրապարակելու³⁴: Չիթունուց գրառած «Լորկե»-ի տարբերակը³⁵ մեղեդու կառուցման և զարգացման սկզբունքով ավանդական Վանա «Լորկե»-ն է, որն այդքան սիրված և տարածված է եղել Վասպուրական աշխարհում:

Քուրդ գիտնականները, «Լորկե»-ն ներկայացնելով որպես քրդական ազգային պար և փորձելով բացատրել պարերգի իմաստն ու նշանակությունը, **լորկե** բառի մի շարք իրարամերժ «ստուգաբանումներ» են տալիս.

լորկե, **լու**լկե, լուկե – օրորոց,
լորկե, լոռկե, լոռ – կաթնաշոռ,
լորկե, **լու**լկե – խմորի գունդ են³⁶:

Քրդագետ Հաջիե Ջընդին ծնունդով ալաշկերտցի Արշակ Սարգսյանի երգած «Լորկե»-ի հիմնատող-կրկնակը.

Արևմտյան Հայաստանում քաղաքական բարենորոգումներ անցկացնելու համար կոչվել է՝ Երկաթյա պատրիարք («Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 2002, էջ 694):

³² Ձայնագրությունները շարունակվեցին 1914-ին Կ. Պոլսում, և Չիթունու պատմելով, նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների երեկոները շարունակ աշխատելով, վարդապետը նրանից գրառեց նոր երգեր, որոնք հետագայում զետեղվեցին Կոմիտասի ԵԺ-ի 14-րդ հատորում: **Կոմիտաս**, ԵԺ, 14 հ., Երևան, 2006, էջ 6-8:

³³ Այդ տարիներին Կոմիտասի ինքնազգացողությունն աստիճանաբար վատանում էր, և նրա արվեստագետ ընկերներն ու բազմաթիվ մտավորականներ խիստ մտահոգված էին վարդապետի առողջական վիճակով: Չիթունին ենթադրելով, որ Կոմիտասի կատարած ձայնագրությունները հավանաբար կկորչեն, իր իմացած երգերը երգում է նաև Թումանյանին:

³⁴ Չիթունու կատարմամբ երգերը (70 նմուշ) զետեղված են Թումանյանի «Հայրենի երգ ու բան» IV հատորի՝ Վան-Վասպուրական շրջանը ներկայացնող II մասում (**Թումանյան Մ.**, Հայրենի երգ ու բան, 4 հ., Երևան, «Հանգակ» հրատ., 2005):

³⁵ **Թումանյան Մ.**, Հայրենի երգ ու բան, 4 հ., Երևան, «Հանգակ-97», 2005, N 250, էջ 297-299:

³⁶ **Лисициан С.**, նշվ. աշխ., հ. 1, էջ 433:

Нəвир лйулкə, һəвир лйулкə,
Ханме лйулкə!
թարգմանում է՝

Катай тесто, катaй тесто,
Госпожа Л'Ул'ка!³⁷

անտեսելով «**հավիր**» բառի **հայերեն** նշանակությունը. «Հավիր, հաւել, հաւեցի, հաւ՝ սկիզբն անել, սկսել, սկզբնաւորել»³⁸:

Երաժշտագետ Ջամիլա Ջալիլը քրդական ժողովրդական երգերի իր ժողովածուն³⁹ կազմելիս «Լորկե-լորկե»-ն (Lürke-Lürke) վերնագրել է «Баю-бай» և դասել օրորների շարքում.

Баю, баю, баю, баю, Ханум, песню спой,
Я очарован твоими мелкими косами,
Порсор, песню спой.

Принеси нож и разрежь сыр,
Я очарован твоими мелкими косами,

Я вошел в дом Алиé Калé,
Он угостил меня жареным мясом;

Я вошел в дом Хамидé Дысо,
Он угостил меня хлебом и щавелем,

Я вошел в дом дяди Бакыра,
Он дал мне семь пудов сахара.

Ինքնին պարզ է, որ ցուցադրված երգի բովանդակությունն օրորի և առհասարակ երեխային քնեցնելու հետ ոչ մի կապ չունի: Եթե նույնիսկ ենթադրենք, որ ժողովածուն կազմող հեղինակի համար «շփոթմունքի» պատճառ կարող էր լինել երգասացի ոչ թե «**լորիկ**», այլ «**լուրիկ**» (օրոր, նանի)

³⁷ Նույն տեղում, էջ 590:

³⁸ **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, 3 հ., Երևան, «Հայպետհրատ», 1944, էջ 85:

³⁹ **Cemila Celil**, Kilamed cimeta kьrda (Курдские народные песни), Москва, изд. «Музыка», 1965, N 86.

արտաբերման ձևը, ապա դա էլ հասկանալի չէ, քանզի քրդերեն «լոր» բառը փոխառված է հայերենի «լոր» ձևից և քրդերենում նույն իմաստն է կրում, ինչը և մեզանում՝ «թոչուն, լորամարգ»⁴⁰:

Ս. Լիսիցյանը նշում է, որ քրդական միջավայրում տարածված «Լորկե»-ների տեքստերի բովանդակությունը կենցաղային բնույթ է կրում, որտեղ «...մի քաղցած մարդ (երգում է առաջին դեմքից), տնետուն շրջելով, ոչ մի կերպ չի կարողանում կշտանալ»⁴¹:

Լորկե-Լորկե⁴²

/ Վան /

$\text{♩} = 126$

Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, խա - նը - մե Լոր - կե,
Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, խա - թու - մե Լոր - կե,
Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, չեկ աղ - ջիկ Լոր - կե:
Ե - լանք, հա - սանք տուն Ա - մա - թանք, խա - նը - մե Լոր - կե,
Թե - թին սպի - տակ լա - վաշ ու հաց, խա - թու - մե Լոր - կե:
Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, Լոր - կե, խա - թու - մե Լոր - կե:

Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,
Խանըմե Լորկե,
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,

Էկանք, հասանք մոլլայի դուռ,
Կնիգ դարդից դառավ մի բուռ:

⁴⁰ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, 2 հ., Երևան, «Համալսարան» հրատ., 1973, էջ 298:

⁴¹ Лисициан С., նշվ. աշխ., հ. 1, էջ 433:

⁴² Лисициан С., նշվ. աշխ., հ. 2, N 109, էջ 485-486: Ձայնագրությունը կատարել է Մուշեղ Աղայանը 1930-ական թթ. սկզբին: Ինֆորմանտն է Մովսես Տեր-Հովհաննիսյանը (ծագումով վանեցի):

Խաթունն Լորկե,
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,
Շեկ աղջիկ Լորկե:

Հարցրինք. «տո՞ւնն ա աղբեր
Հերես»,
Ձոքանջն էլավ էրես-էրես:

Ելանք, հասանք տուն
Ամարանց,
Խանըմն Լորկե,
Բերին սպիտակ լավաշ ու
հաց,
Խաթունն Լորկե,
Լորկե, Լորկե, Լորկե, Լորկե,
Շեկ աղջիկ Լորկե:

Մըտանք տունը Այվազ աղբոր,
Բերին դըրին սոխ ու սխտոր:

Էկանք հարցրինք. «ո՞ր է
Ամիր»,
Մեզ տըվեցին հաց ու պանիր:

Ելանք, գընացինք Մխիկանց,
Մեզի տըվին էծու խորված⁴³:

Մենք հակված չենք այդ տեքստերը դիտարկելու «կենցաղային»-ի շրջանակներում, քանզի քիչ հավանական է, որ նման բովանդակությամբ քրդերեն երգվող «խաղիկները» հայերը փոխառնեին և «կցելով» իրենց ավանդական ծիսական «Լորկե»-ին՝ տարածեին Ալաշկերտով, Շատախով և Վանով մեկ: Հնարավոր է, որ ոչ այնքան վաղ անցյալում հայոց «Լորկե»-ն ունեցել է հենց այդպիսի տեքստ, և կարծում ենք, որ խոսքը ոչ թե «մեկ քաղցած մարդու», այլ հարսանքավորների մասին է, որոնք եկեղեցուց վերադառնալիս, տնից տուն անցնելով, հյուրասիրվում էին (այլապես «սոված երիտասարդի» տնետուն շրջելու դրդապատճառներն անհասկանալի են): Հարսանքավորներին հյուրասիրելն ընդունված և տարածված սովորույթ էր. գյուղացիները սեփական տան շեմին մի փոքրիկ սեղան էին դնում և դռնով անցնող հյուրերին «պատիվ» տալիս (այս սովորույթը մի շարք գյուղերում առ այսօր պահպանվել է): Ենթադրում ենք, որ հենց այսպիսի հյուրասիրությունների մասին է «Լորկե»-ի ավանդական տեքստը, իսկ խնամիների «դժգոհությունը» և ճաշակած ուտեստների վերաբերյալ «գանգատը» զուտ կատակային բնույթ են կրել (հիշենք հարսանեկան կատակային «Էն դիզան» պարերգը):

Ծիսական երգերին, ինչպես և պարերգերին, բնորոշ է գործողությունների, իրերի, գործող անձանց «**փոխառփոխ թվարկումը**», և երգի տեքստի կառուցման նման սկզբունքը գտնում ենք հայ ժողովրդի բանավոր խոսքի հնագույն շերտերում՝ առասպելներում, վիպական գրույցներում և իհարկե


⁴³ Թարգմանությունը մերն է: Քրդերեն բնագիրը տե՛ս նշված աղբյուրում, էջ 482-486:

հեքիաթներում: Նման ծիսական երգերի և պարերգերի օրինակներ ժողովրդական երգաստեղծության մեջ քիչ չեն. «Եկեք տեսեք, ի՞նչն է կերի զինչ», «Համբարձման էրկուշաթթի», «Զինչ ու զինչ տամ լողվորչուն», «Էն դիզան, բեդ-բեդ դիզան», «Թագվորի մեր, դուս արի» ևն:

Ինչպես գիտենք, յուրաքանչյուր պարերգի առանցքը կազմում է կայուն և անփոփոխ «հիմնատող կրկնակը», որին կարող է միանալ տողի համապատասխան վանկաքանակ ունեցող ցանկացած թափառիկ խաղիկ: «Հիմնատող կրկնակի» ինչպես տաղաչափական, այնպես էլ մեղեդային կառուցվածքը ձևավորված և կարծրացած **բանաձև է**: «Լորկե»-ի դեպքում կարելի է առանձնացնել մեղեդային երկու տիպ. մեկը՝ բնորոշ վանեցիներին, մյուսը՝ ալաշկերտցիներին: Սակայն հետաքրքրական է, որ չնայած այդ տարածքային տարբերակների մեղեդային տարբերությունը, դրանց ռիթմական բանաձևերը նույնն են՝ վեց «պիրիֆի» ոտքից բաղկացած շղթան ավարտվում է «սպոնդեյ» ոտքով.



Լորկե, լորկե⁴⁴
/ Ալաշկերտ /




Եթե տաղաչափական և մետրաոլիթմական միավորներով վանի և Ալաշկերտի «Լորկե»-ները նույնն են, այսինքն՝ մեկի տեքստը լիովին «հարմարվում» է մյուսի մեղեդուն, ապա պարային քայլի և պարի ընդհանուր կառուցվածքով այդ «Լորկե»-ները տարբեր են: Ալաշկերտցիները «Քոչարի», «Աղե» և «Լորկե»

⁴⁴ Այս օրինակը կատարել է 14-ամյա Մհեր Նավոյանը, որը տատիկից է սովորել, նախն.՝ Ալաշկերտ (ԵՊԿ-ի ֆոլկ. ծայնադարանի արխիվ, Երևան, կաթինետ, 1982, N 2):

շուրջպարերը գրեթե միանման են պարել⁴⁵, այսինքն՝ ոտքերի, ձեռքերի և մարմնի պարային շարժումների հաջորդականությունը նույն սկզբունքով են կատարել⁴⁶: Վանեցիներն իրենց «Լորկե»-ն զգալիորեն տարբեր են պարել (տե՛ս պարերի գծապատկերը):


Ավաշկերտի «Լորկե»



⁴⁵ Սրբուհի Լիսիցյանը դեռևս 30-ականներին պարային շարժումների գրառման մի ամբողջ համակարգ էր մշակել՝ վերնագրելով «Запись движения»: Հետագայում այդ սկզբունքը (кинетография) կիրառեց իր դաշտային հավաքչական աշխատանքներում՝ գիտական ճշգրտությամբ արձանագրելով հայկական ժողովրդական պարերը և տալով նաև դրանց գծապատկերը:

⁴⁶ Лисициан С., նշվ. աշխ., հ. 1, էջ 431-436:

Վանի «Լորկե»



Պարերգի մեղեդին սերտորեն կապված է շարժման հետ. մեկը մյուսի արտացոլումն է, և քանի որ վանեցիների «Լորկե»-ի մեղեդին փոքր-ինչ այլ է, ապա պարն էլ ուրիշ է: Այս դեպքում ավելորդ չէ շեշտել նրանց սկզբնական վերընթաց կվարտային թռիչքը, որը, կարծում ենք, վերջին դերը չի խաղացել վանեցիների «Լորկե»-ի պարային քայլերի և շարժումների «բովանդակության մեջ»: Հայի «բռնած» ցանկացած շուրջպարի գծային պատկերը կազմում է մի անկրկնելի և հրաշագեղ «վարդյակ» (Rosettes): Նման վարդյակներով լեփ-լեցուն է մեր հայկական զարդարվեստը. այդ զարդանախշերն անմահացել են սրբավայրերի պատերի, շիրմաքարերի, խաչքարերի և ձեռագիր մատյանների էջերի վրա, որոնք, ի վերջո, ոճավորված հավերժության նշան են⁴⁷:

Այսպիսով, հնագույն ծիսական շուրջպար հանդիսանալով, «Լորկե»-ն պատկանել է «Հարսնիսի կատակներ» կոչվող շարքին, ինչպիսիք են «Թագ-վորի մեր, դուս արի» կամ «Ըն դիզան...» պարերգերը: Իր ավանդականու-

⁴⁷ Առանձնահատուկ ուշադրություն դարձնելով «վարդյակներին»՝ Ս. Լիսիցյանն իր հիմնարար այդ աշխատության առաջին հատորի տիտղոսաթերթին պատկերել է հենց «Լորկե»-ի պարային գծապատկերը:

թյամբ և բանաձևային մտածողությամբ ծիսական երաժշտությունը հայկական ժողովրդական երգաստեղծության ամենակայուն տեսակն է: Ավանդականությունը հավասարապես վերաբերում է և՛ երաժշտությանը, և՛ խոսքին, և՛ պարին: Սակայն, եթե «Լորկե»-ի մեղեդային գիծն ու պարը պահպանվել են, ապա բանաստեղծական տեքստը՝ **ոչ**, իր հնավանդ բովանդակությունը կորցնելով՝ պարերգը հետզհետե «հարստացել է» սիրային թափառիկ խաղիկներով, ինչն էլ, կարծում ենք, պատճառ է հանդիսացել այն իրողության, որ «Լորկե»-ն հեռացել է ծեսից:

Կատակերգերը հարսանեկան հանդիսության ամենասիրված մասն են կազմել, և ժողովուրդն ավելորդ անգամ ուրախանալու ու իր թերությունների վրա ծիծաղելու առիթը երբեք բաց չի թողել: Եթե հարսանեկան գովքերի «հերոսները» հարսն ու փեսան էին՝ «թագվորն» ու «թագուհին», ապա հարսանեկան կատակերգերի «գործող անձինք» հարսանքավորներն էին՝ ազաբները, քավորը, սկեսուրը՝ երգիծանքի և ծաղրանքի ենթարկվողները: «Լորկե»-ի դեպքում հարսանքավորներին հյուրասիրողները (ծեսի շրջանակներում) «պաշտոնական կարգավիճակ» չունեցող մարդիկ էին՝ շարքային գյուղացիներ՝ իրենց սովորական անձնանուններով: Այս իրողությունը «Լորկե»-ն մոտեցրեց կենցաղային կատակերգի տեսակի հետ, և ավանդական շուրջպարը վերջնականապես դուրս մղվեց ծեսի շրջանակներից:

Այնուամենայնիվ, «Լորկե»-ի բանաստեղծական տեքստի պահպանման գործում մեծ եղան բարեկամ քուրդ ժողովրդի լեզվի դերն ու նշանակությունը. միայն քրդերենով երգված օրինակների շնորհիվ հնարավոր եղավ վերականգնել հայոց ծիսական շուրջպար «Լորկե»-ի հարսանեկան հյուրասիրությանը նվիրված ավանդական տեքստը:

Հարսանքավորներին հյուրասիրելը, մերձավորի հետ «հաց կիսելը»՝ հնագույն ժամանակներից եկող սովորույթ էր, որը կարող էր աղերսներ ունենալ զոհաբերություն մատուցելու, պատարագ տալու, ուխտի և խոստման ծեսերի, ծիսակարգերի հետ: Հին զոհաբերությանը փոխարինեց **մատաղը**, և հայ եկեղեցին այն ընդունեց իբրև **հոգու հաց**, որը հնում կոչվել է **ազապե**՝ սիրո ճաշ: Մեր ուսումնասիրության մեջ պատահական չէ, որ հիշատակեցինք իսրայելցիներին կերակրելու՝ «հաց տալու» աստվածաշնչյան տողերը, երբ երկնքից թափվող **լորիկներն** ու **մանանան** փրկեցին սովի մատնված հրեա ժողովրդին: Հնարավոր է, որ հայոց «Լորկե»-ն աղերսներ է ունեցել այդ պատմության հետ, և հարսանեկան պարերգի հնագույն տեքստը, կապված սեղանի՝ **ճաշի, հացկերույթի** հետ, դրա ապացույցներից մեկն է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայկական հարսանեկան ծեսում առանձնահատուկ տեղ են գրավել թոչնալիս պարերը՝ «Կոնգավէն», «Ղազ-ղազ»-ը, «Հավքուն», «Կաքավ»-ը, որոնց արմատները դեռևս կենդանապաշտության ժամանակաշրջանում են և աղերսվում են նախնիների հոգու պաշտամունքի հետ: Այդպիսի շուրջապար է հանդիսացել նաև հանրահայտ «Լորկե»-ն, որն ի սկզբանե եղել է ծիսական, իսկ հետագայում, կորցնելով արմատները, դարձել է կենցաղային-քնարական պարերգ:

«Լորկե»-ի ծննդավայրը Վանն ու Ալաշկերտն է՝ այնպիսի պատմական տարածքներ, որոնք հնուց ի վեր բնակեցված են եղել հայերով, և միայն XVIII դարում պատմական իրադարձությունների բերումով այդ վայրերում հաստատվել են թուրքերն ու քրդերը: Դա է պատճառը, որ «Լորկե»-ի որոշ նմուշներ քրդալեզու են, քանի որ պատմական Հայաստանի մի շարք շրջաններ ստիպողաբար դարձել են քրդալեզու: Պատմական իրողությունների անտեսումը թյուրիմացության առիթ է տվել քուրդ մասնագետներին (երաժշտագետներին, լեզվաբաններին) «Լորկե»-ն համարելու քրդական պարերգ: Բազմաթիվ ազգագրական աղբյուրներ տեղեկացնում են այն մասին, որ թուրքերն ու քրդերը չեն ունեցել խմբակային պարերգեր և շուրջապարեր, քանզի պարը մահմեդական կրոնի կողմից չի խրախուսվել և Ալլահին ոչ հաճո գրադմունք է համարվել: Այնուամենայնիվ, հարևանների ավանդույթներն ու սովորությունները յուրացնելով, քուրդ և թուրք տղամարդիկ, ծիսական տոնակատարությունների և խնջույքների ժամանակ միանում էին հայերին և մասնակցում վերջիններիս խմբակային շուրջապարերին: «Լորկե»-ի ուսումնասիրությունը չափազանց կարևոր ենք համարում, քանզի այն համալրում է ծիսական պարերգերի, ինչպես և կատակերգերի շարքը և օգնում առավել ամբողջական պատկերացում կազմելու հայոց հարսանեկան ավանդական շուրջապարերի մասին:

Քանալի քաներ - թոչնալիս պարեր, նախնիների պաշտամունք, ծիսական շուրջապարեր, հնագույն քաղաքակրթություններ, կենդանապաշտական խորհրդանիշներ, կրոնական հավատալիքներ, դիցաբանական պատկերացումներ, համեմատական վերլուծություն:

**«ЛОРКЕ» КАК АРМЯНСКАЯ ТРАДИЦИОННАЯ СВАДЕБНАЯ
ОБРЯДОВАЯ ПЕСНЯ-ПЛЯСКА**

МАРИАННА ТИГРАНЯН

Издrevле в армянском свадебном обряде особое место занимали птичьи танцы: «Журавлиная», «Гусиная», «Куриная», песня-пляска «Куропатка», кото-

рые изначально являлись обрядовыми и были связаны с культом духа предков. По многим свидетельствам, такой свадебной пляской в прошлом была и знаменитая армянская «Лоркэ» (“Перепелка”), впоследствии потерявшая свою обрядовость и ставшая обычной любовно-бытовой песней-пляской.

Родина «Лоркэ» это Ван и Алашкерт – исконно армянские земли, на которых с древнейших времен обитали армяне, и лишь в XVIII столетии эти края были заселены турками и курдами. В определенных областях исторической Армении насильственно внедрялся курдский язык, этим и объясняется тот факт, что некоторые из записанных образцов «Лоркэ» пелись на курдском (информанты – армяне). Не считаясь с историческими фактами, курдоведы (музыковеды, языковеды) впали в заблуждение и стали причислять «Лоркэ» к своим национальным пляскам. Многие этнографические источники свидетельствуют о том, что турки и курды не имели коллективных круговых плясок, так как танец в исламе, как неугодный Всевышнему, не поощрялся. Однако, переняв у своих соседей их культурные традиции и некоторые обычаи, турецкие и курдские мужчины во время сельскохозяйственных празднеств присоединялись к армянам, участвуя в их коллективных плясках.

Изучение и анализ «Лоркэ» позволили восстановить ее функцию как исконно обрядовой песни-пляски, а также позволили более широко взглянуть на традиционные свадебные шуточно-обрядовые круговые танцы армян.

Ключевые слова – птичьи пляски, культ предков, обрядовые круговые песни-пляски, древнейшие цивилизации, тотемические символы, религиозные верования, мифологические представления, сравнительный анализ.

“LORKE” AN ARMENIAN WEDDING RITUAL CIRCLE DANCE

MARIANNA TIGRANYAN

In Armenian wedding rituals of significant prominence some dances are dedicated to different birds such as ‘Krngaven’, ‘Ghaz-ghaz’, ‘Havkun’ and ‘Kakav’. These ‘bird dances’ probably might have originated in the times of animal worship and are related to the worship of the soul. “Lorke” is a popular circle dance of the kind, which was at the beginning a ritual dance but later loosing its origin has become a participatory dance song.

“Lorke”s place of origin is Van and Alashgerd, historically these are uniquely Armenian populated territories. Turks and Kurds settled in these regions only in the XVIII century after some historical events. As a result after some years Armenians of certain regions of the historical Armenia were forced to adopt the

Kurdish language. That is how the existence of some Kurdish variations of the song is explicated. Ignorance of history is the cause for Kurd specialist (linguists, lexicographers and musicologists) to take for granted that “Lorke” is theirs. Many sources of ethnographic research studies point to the fact that Turks and Kurds have never had either dance music or circle dances. Dancing has never been encouraged in Islam and is considered to be haram (forbidden). However, by adopting certain customs and traditions of a neighboring people Turk and Kurd men with time used to join the Armenians during celebrations and participate in circle. The study of “Lorke” is of prime importance as it complements the ritual dance music and humorous songs and helps to shape a complete insight into the Armenian wedding traditional circle dances.

Key words – bird dances, ritual circle dances, ancient civilizations, animal worship symbols, religious beliefs, mythological perceptions, comparative analysis.